

ԴԱՐՁՅԱԼ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ «ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՑ ԵՎ ՆՇԱՆԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի 7-րդ համարում (1964 թ.) լույս տեսավ «Արատոս Սուլացու *Διοσεύειν* կամ *Προγυασιαν* աշխատության հին հայերեն թարգմանությունը» խորագրով մեր հոդվածը, որտեղ ցույց էր տրված, որ սխալմամբ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» ռեբրևութաբանական բովանդակությամբ աշխատությունը հույն հայտնի բանաստեղծ Արատոս Սուլացու *Διοσεύειν* կամ *Προγυασιαν* չափածո երկի թարգմանությունն է։ Հոդվածում դուգահեռաբար բերված էր աշխատության հունարեն բնադիրը և նրա հին հայերեն թարգմանությունը։ Հունարեն և գրաբար քիչ թե շատ իմացող մասնագետին համոզել այդ երկու բնագրերի նույնությանը որևէ դժվարություն չի ներկայացնում։ Սակայն բանաս. գիտ. դոկտոր Գ. Աբգարյանը հրատարակեց մի հոդված¹, որով կասկածի տակ է առնվում մեր առաջ քաշած թեզի ճշմարտացիությունը և ասպարեզ հանվում այլ տեսություն։ Իր հոդվածում Գ. Աբգարյանը բազմաթիվ խնդիրներ է քննության ենթարկում, կարծիքներ հայտնում «Յաղագս ամպոց և նշանաց» երկի հեղինակի, թարգմանչի և մի շարք այլ հարցերի մասին, կարծիքներ, որոնց մի մասը Գ. Աբգարյանից շատ առաջ արդեն հայտնվել էր խնդրո առարկա երկով ղբադված մասնագետների կողմից։ Փաստերը, սակայն, չեն հաստատում Աբգարյանի տեսակետները։ Որպեսզի մեր ասածը սոսկ հայտարարության տպավորություն չթողնի, դիմենք փաստերին։

Գ. Աբգարյանը նախ և առաջ մանրամասն ուսումնասիրում է մի կարևոր հարց, որը... 75 տարի առաջ արդեն լուծված էր։ Նա ցույց է տալիս, որ «Յաղագս ամպոց և նշանացը» «սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն» (էջ 89, ընդգծումը Գ. Աբգարյանինն է — Հ. Բ.)։ Նա, առանց անունը տալու, կրկնում է պարզապես Գալուստ Տեր-Մկրտչյանի կարծիքը։ Բազմավաստակ գիտնականը 75 տարի առաջ գրել է. «Մնում է մի ուրիշ խնդիր. բնագիր՝ է, թե թարգմանական այս «Յաղագս ամպոց և նշանացը»։ Մենք հակված ենք կարծել վերջինը, ոչ միայն օտար (հույն) բառերի գործածության պատճառով — այդ կարող էր տեղի ունենալ և ինքնուրույն հայ բնագրում — այլ աչքի առաջ ունենալով դիտողությանց մի քանիսի անհնարավորությունը Հայաստանում կամ նույնիսկ Տրապիզոնում, ուր երկար տարիներ ապրել է Շիրակացին (օրինակ կղզիների մասին եղած դիտողությունը)»²։

¹ Գ. Վ. Աբգարյան, Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 77—94։

² «Արարատ», 1896, էջ 99։ Փ. Տեր-Դավթյանը և Ս. Ս. Արեշատյանը խնդրո առարկա երկի իրենց իրականացրած ուսերեն թարգմանության առաջաբանում կանգ առնելով Գ. Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ ենթադրության վրա, գրել են. «Достойно внимание мнение Г. Тер-Мкрт-

Գ. Աբղարյանի հոգվածում, սակայն, «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության թարգմանական լինելու հարցը երկրորդական տեղ է զբաղում: Հոգվածագրի հիմնական նպատակն է ապացուցել, որ «Յաղագս ամպոց և նշանացը» Արատոս Սուլացու երկի թարգմանությունը չէ, ոչ ավելի, ոչ պակաս, որ Բարթիկյանը տասներկու էջ զուգահեռ տեքստ է նսրկայացրել մատնացույց անելու համար դրանց նույնությունը, առանց նկատելու, որ այդ երկուսի միջև «ոչ մի նմանություն չկա»: Դեռ ավելին, որ Բարթիկյանի բերած «այդ զուգահեռ տեքստերը, որոնք կոչված են ցույց տալու հունարեն և հայերեն բնագրերի եուլնությունը... իրականում բացահայտում են նրանց տարբերությունները» (էջ 84, ընդգծումները Աբղարյանինն են — Հ. Բ.): Աբղարյանը շարունակում է. «Ոչ մի բանասիրական փաստարկ չի բերված հոգուտ այդ բանաստեղծության և «Յաղագս նշանացի» նույնության» (էջ 84): «Ընթերցողը չգիտե, վերջացնում է Գ. Աբղարյանը, թե ինչ հիմունքներով է «Յաղագս նշանացը» համարվել Արատոս Սուլացու թարգմանությունը: Հայերեն չի թարգմանված և «Յաղագս նշանացի» հետ չի համեմատված հունարեն բանաստեղծության ոչ մի առով, որից երևար, որ այդ բնագրերն ինչ-որ կապ ունեն» (էջ 84, ծանոթ. 21):

Ինչ խոսք, Գ. Աբղարյանն իրավացի է, մենք չենք թարգմանել (հունարեն բնագրից) և ոչ մի տող, բայց այդ, մեր համոզմամբ սիդիփոսյան աշխատանքին, չենք դիմել ոչ թե որովհետև դա կարող էր որևէ կերպ կասկածի տակ դնել Արատոս Սուլացու երկի և «Յաղագս ամպոց և նշանացի» նույնության մասին մեր առաջ քաշած վարկածը, այլ այն պարզ պատճառով, որ «Յաղագս ամպոց և նշանացը» արդեն թարգմանությունն է Արատոս Սուլացու բանաստեղծության՝ իրականացված շատ դարեր առաջ և Աբղարյանի պահանջած թարգմանությունը փաստորեն պիտի «Յաղագս ամպոց և նշանացի» աշխարհաբարը լիներ: Բայց քանի որ Գ. Աբղարյանի հոգվածը մաղաչափ անդամ չի սասանել «Յաղագս ամպոց և նշանացը» Արատոս Սուլացու երկի թարգմանությունը լինելու մասին մեր համոզմունքը, քանի որ մեր ներկա հոգվածում այդ իրողությունը որպես արսիոմա պիտի ունենանք, ընթերցողին էլ հնարավոր թյուրիմացություններից հեռու պահելու նպատակով, այնուամենայնիվ, բերենք Գ. Աբղարյանի պահանջած ոչ թե մի քանի տողի թարգմանությունը Արատոսի հունարեն բնագրից և դրա համեմատությունը «Յաղագս ամպոց և նշանացի» հետ, այլ մի ամբողջ տասնյակ հատվածներ, որպեսզի ընթերցողը համոզվի, որ արդարև, «այդ բնագրերն ինչ-որ կապ ունեն»: Սկսենք «Յաղագս ամպոց և նշանացի» հինյ առաջին նախադասությունից, կանխավ բերելով հունարեն բնագիրը:

1. Արատոսի երկի հունարեն բնագիրն ունի.

λεπτεῖ μὲν καὶ αὐτὴ τὸ περὶ τριῶν ἡμέρων ἐοῖτα
 εὐδοκᾷ· χ'εἴη· λεπτεῖ δὲ καὶ εὐμῆλαι· ἐρευνᾷς
 πνευματικῇ (51—53).

чяна относительно переводного характера труда «Об облаках и знамениях». Апанія Ширакаци, Космография. Перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна, Ереван, 1962, էջ 26. Մատենադարանի «Բանբերի» էջերում հրատարակված մեր հոգվածն ամբողջությամբ հաստատում էր այդ տեսակետի ճշտությունը:

Թարգմանենք.

«Երբ երեք օրվա լուսինը բարակ է ու հստակ,
օդը պարզ է լինելու: Եթե բարակ է և շատ կարմիր,
հողմային է լինելու»:

«Յաղագս ամպոց և նշանացում» կարդում ենք.

«Յորժամ. Գ. օրեայ երեկ լուսինն և եղջերքն վերածգեալ՝ և յստակ և սուրբ
լինի՝ նշանակէ զաւդ պարզութեան. ապա թէ սուրբ են եղջերքն և շիկագոյն՝
հողմային նշանակէ»:

2. Արատոսի երկում.

Եւ ըն չ'առ' օրփօտօտոյ չօրօտ. քրտոյ զիւր չ'օտ
լիւն' օրօտօտօտ. լիւն' օրօտօտօտ փայլի.
Առ' օրօտ չ'առօտ քօրօտօտօտ քօրօտ.
Չօրօտ չ'առօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ.
Եւ ըն օրօտ օրօտ չ'առօտ քօրօտ քօրօտ.
Կ' օրօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ (56—61).

Թարգմանությունը.

«Երբ երեք օրվա լուսինի եղջյուրները
ոչ ներս են խոնարհված, ոչ էլ դուրս կորացած,
այլ երկուսն էլ ուղիղ են և կանգուն,
այդ գիշերից հետո արևմուտքից քամիներ են փչելու:
Երբ շորրորդ օրն էլ այդպես կանգուն լինեն եղջյուրները,
դա խիստ եղանակի նշան է»:

«Յաղագս ամպոց և նշանացում» կարդում ենք.

«Յորժամ. Դ. օրեայ է լուսինն և եղջերքն ոչ ի ներքս խոնարհեալ, և ոչ յող-
նեալ արտաքս, այլ կանգուն վերածգեալ՝ հողմոյ նշանակ է, ապա թէ ի շորրոր-
դումն նորին նման երեկն եղջերքն՝ առաւել նշանակէ զաւդոց սաստկութիւն»:

3. Արատոսի երկում.

Չօրօտ չ'առ քրտօտօտ օրօտ քօրօտ քօրօտ քօրօտ
քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ
քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ քօրօտ (64—66).

Թարգմանությունը.

«Երբ երեք օրվա լուսինն ամբողջությամբ պատվի
կարմրագույն շրջանակով, եղանակը ավելի է վատանալու,
բայց առավել խիստ կլինի այն, եթե հրո պես կարմրանա»:

«Յաղագս նշանացում» կարդում ենք.

«Յորժամ. Ե. օրեայ է լուսինն և ամենայն բոլորն շիկագոյն է՝ զյուզումն
ամպոց նշանակէ և զաւդոց. ապա թե շիկագոյնս աճեցեալ և հրացեալ՝ ևս առա-
ւել քան զառաջինն լինի յուզումն ամպոց և աւդոց»:

4. Արատոսի երկում.

Σχολιες και ΦΑΤΝΗΝ. η μὲν τ'ολίγη εἰκασία
 ἀγλήσει. βορραὶη ὑπὸ Καρχινῶ τηγνῶται.
 αὐτοὶ δὲ μὲν οὕτω λεπτα φασίνονενοι φοβεύονται
 ἀστέρεις...
 εἰς μὲν παρ'βορέας· γὰρ οὐδ'ἐπιχειλεῖται ἄλλος.
 καὶ τοὶ μὲν χαλδονταὶ ΟΝΟΙ, μετὰ δὲ τὴν Φατνή.
 ἦτε καὶ ἐξάπινγες παντὶ Διὶ εὐδοίωντος
 γίνεσθ'ἄφαντος ὁλη· τοὶ δ'ἄμφοτερωθεν ἰόντες
 ἀστέρεις ἀλλήλων αὐτοσχεδὸν ἰνδαλονται (160—169).

Թարգմանությունը.

«Ուշադրություն դարձրու նաև Մսուրին: Նա նման է
 թույլ մառախուղի և գտնվում է հյուսիսում՝ Խեցգետնի տակ.
 Նրա շուրջը ընթանում են թույլ լույսով երկու աստղեր,
 ...մեկը (Մսուրի) հյուսիսում, մյուսը՝ հարավում:
 Այդ (աստղերը) էջ են կոչվում, նրանց մեջտեղում է Մսուրը:
 Երբ հանկարծ երկինքը ամբողջությամբ պարզ լինի,
 (Մսուրն) աներևութանում է, իսկ նրա երկու կողմում
 ընթացող աստղերը, թվում է թե ավելի մոտիկ են միմյանց»:

«Յաղագս նշանացում».

«Տեղի է որ կոչի Մսուր և այս ժողով իմն է, որ երևի դամպ նման, և լինի
 առ պատենիք Խեցգետնոյն: Եւ .Բ. աստեղք առ նովա՝ մի ի հարաւոյ և մի
 յարեմտից, որ կոչեն էջս, և յորժամ պարզոյ ի վեր հայիս՝ յանկարծ Մսուրն
 չերևի և նուազ աստեղքն՝ որ էջք կոչին՝ երևին»:

5. Արատոսի երկում.

Πολύταχ' ἡμιν αἶται ἡ εἰσάλεια ὄρνιθες
 ἀπ'ἀστέρων κινῶνται ἐνέμεναι ὑδάτεσσιν,
 ἡ ἡμιν γὰρ περὶ ὀπίθ' ἡγεμόνες αἰσθονταὶ
 γαστέρι τύπουσθαι αὐτῶς ἐνέμενον ὑδωρ (210—213).

Թարգմանությունը.

«Հաճախ երբ լճային կամ ծովային թռչունները
 անդադար ջրի մեջ են մխրձվում,
 կամ ծիծեռնակները լճի շուրջը երկար թռչում՝
 իրենց փորը ջրի ալիքներին հարելով, [դա անձրևի նշան է]:

«Յաղագս նշանացում».

«Յորժամ ծովային և դետային հաւք անդադար մրտիսդճին... անձրևս նշու-
 նակէ: Յորժամ ծիծառունք առ լճովք թռչին ստէպ ստէպ և ղթևսն ի ջուր հար-
 կանեն՝ ղյուզմունս ամպոց նշանակէ»:

6. Արատոսի երկում.

Καὶ βῆς ἥδη τοὶ πόροι ὁδῶν ἐν ὁμίῳ
ὁραὸν εἰσανιόντες ἀπ' αἰθέρος ὠσπερ ἄντρον (222—223).

Թարգմանությունը.

«Անձրևից հենց առաջ արջառը
դեպի երկինք է նայում և օդը հոտոտում»:

«Յաղագս նշանացում» կարդում ենք.
«Յորժամ արջառ յերկին զլիսամբարձ է և հոտայ՝ անձրևս նշանակէ»:

7. Արատոսի երկում.

καὶ νῦν δὲ οἰκιστοὶ ὑπὸ νόμῳ τῷ κοινῷ
ἐργάζεσθαι κατὰ γένος τινάσσονται πτερογέσσιν (238—239).

Թարգմանությունը.

«Երբ ընտանի բաղերը և կոռուրի տակ ապրող ճայակները,
քիվի վրա գալով թափ տան իրենց թևերը, [անձրև է գալու]»:

«Յաղագս նշանացում».
«Յորժամ ընտանի հաւք և ասղակտուցք և ձկնքաղք կտեն և ի բոյն գալով
շարժեն զթևս իւրեանց՝ յուզմունք ամպոց լինի»:

8. Արատոսի երկում.

ὁδῶν ἐργάζεσθαι Διὸς παρὰ τῇ μ' ἐγγενοῦτο
ἣ ἐπὶ κῆρυξ ὁμοῦ ἐρωσίου ὅς ἐστι λελήκω (232, 240).

Թարգմանությունը.

«Երբ արագիլը սուր ձայնելով դեպի ալիքն է նետվում [անձրևի
նշան է]»:

«Յաղագս նշանացում».
«Յորժամ արագիլք ի ծովակոյս իջանեն ձայն[իւ] անձրևս նշանակէ»:

9. Արատոսի երկում.

... μετ' οὗ κεν ἐπὶ πλέον ἤς παροίμεν
ὁπλυνώμε ἰσθίαι καὶ ἐφ' αἵματόν ἰμείψωνται (242—243).

Թարգմանությունը.

«Երբ ճանձերը ավելի սուր կժեն
և արյուն ցանկանան, [անձրև է գալու]»:

«Յաղագս նշանացում».
«Յորժամ ճանձք սրագոյնս խածանեն և զնոյն արիւն յորդորելով ծծեն՝
զյուզմունս ամպոց նշանակէ»:

10. Արատոսի երկում.

λυγὼς αὖ γ' ἔτι γούργητ' ἤξ' ἀποδοῖτ' ἀντιβήσσῃ,
σπινθίρρετ' ὅτ' ἔωσι πέρι πλέονες· λελαιθέσσι δ' αἰ (251—252).

Թարգմանությունը.

«Երբ կրակի վրա դրված կավն ամանի կամ
նոստանի կաթսայի շուրջ բազմաթիվ կայծեր լինեն [անձրև է
գալու]»:

«Յաղագս նշանացում».

«Յորժամ ի կասկարայս կամ ի պուտունս կայծակունք ժողովին՝ անձրևս
նշանակեն»:

Թվում է, թե անհրաժեշտություն չկա նոր օրինակներ բերել, քանի որ փաստորեն պիտի Արատոսի բանաստեղծության 51—261-րդ տողերը թարգմանենք և զուգահեռ բերենք «Յաղագս ամպոց և նշանացը»³։ Բայց հակառակ այդ բոլորին, Գ. Աբգարյանը «Յաղագս ամպոց և նշանաց» երկը Արատոս Սուլացու հայտնի բանաստեղծության թարգմանությունը լինելու մեր առաջ քաշած թեզը որակելով որպես «ամենամեծ թյուրիմացություն», գտնում է և դրա շարժառիթը, որը, իբր, «եղել է Գ. Զարբհանալյանի մի թուուցիկ դիտողությունը, որի համաձայն Անանիա Շիրակացու աշխատություններում հանդիպում է Արատոսի «Յաղագս միաւորութեան զնդին» երկից քաղված «աստեղաբաշխական բանք» (էջ 77)։

Նախ պիտի ասել, որ Զարբհանալյանի այդ թուուցիկ դիտողությունը մեզ թյուրիմացության մեջ գցել չէր կարող, քանի որ նա նկատի ունի «աստեղաբաշխական բանք», իսկ մենք՝ օգերևութաբական։ Մենք չէինք կարող «Յաղագս ամպոց և նշանաց» օգերևութաբանական երկը նույնացնել «Յաղագս միաւորութեան զնդին» հետ թեկուզ այն հասարակ պատճառով, որ Արատոսի «Յաղագս միաւորութեան զնդին» (Περὶ τοῦ ἀστρουνοῦ τοῦ ὁρανοῦ αὐτοῦ αὐτοῦ) չափանված գործը, որ կոչվում էր նաև Κατατομὴ καὶνοῦ կամ Κανὼν, գրվել է Διοτρίστει -ից հետո և բոլորովին այլ աշխատություն է։ Բայց չգիտես ինչու Աբգարյանը լռության է մատնել Զարբհանալյանի այդ թուուցիկ դիտողության նկատմամբ մեր ցուցաբերած վերաբերմունքը։ «Դժվար է ենթադրել, — գրել ենք մենք, — թե նա (իմա՝ Գ. Զարբհանալյանը — Հ. Բ.) նկատի է ունեցել,

³ Շատ հավանական է, որ առանձին բառեր կամ դարձվածքներ տառացի չհամընկնեն իրար, բայց դա չպետք է տարօրինակ թվաւ նախ, հայ թարգմանիչը ոչ Աստվածաշունչ էր թարգմանում, ոչ էլ Նիկիական հավատո հանգանակը։ Նա կարող էր և ավելի ազատ զգալ իրեն, մասնավանդ որ իր բնագիրը չափածո էր, իսկ ինքը թարգմանում էր արձակ։ Երկրորդ, դեռ պարզ չէ, հայ թարգմանչի ձեռքում եղած Արատոսի բնագիրը բառացի համընկնո՞ւմ էր, արդյոք, մեր ձեռքի տակ եղած հունարեն բնագրին, թե ոչ։ Եվ երրորդ, չպետք է անտես առնել այն կարևոր հանգամանքը, որ Արատոսի լեզուն ամենաբարդ և ամենախրթիններից է ողջ հին հունական գրականության մեջ, այնքան խրթին, որ դեռ անտիկ շրջանում նրա երկը կարիք է ունեցել ծանոթագրության, բացատրման, մեկնաբանման։ Անտիկ շրջանից հայտնի են 27 հոգու անուն, որոնք ծանոթագրել են Արատոսի բանաստեղծությունը։ Հայ թարգմանիչը տիտանական աշխատանք է կատարել Արատոսի բնագիրը հասկանալու և թարգմանելու համար, նա, հնարավոր է, առանձին տեղեր բառացի չի թարգմանել, գուցե և ճիշտ չի հասկացել, բայց նրան մեղադրել չի կարելի, չէ՞ որ նա իր ձեռքի տակ չի ունեցել ժամանակակից ճոխ բառարանները և այլ լեզուներով թարգմանություններ։

արդյոք, խնդրո առարկա բնագիրը» (իմա՝ «Յաղագս ամպոց և նշանացը» — Հ. Բ., էջ 338, ծանոթ. 22):

Ժխտելով «Յաղագս ամպոց և նշանացը» Արատոս Սուլացու երկի թարգմանությունը լինելը, Գ. Աբգարյանը գտնում է, որ «քննվող ժողովածուն (?) ոչ թե հունարեն մի ամբողջական աղբյուրի թարգմանություն է, այլ արդեն պատրաստի հայերեն զանազան քարգմանություններից փաղված նյութերի հավաքածու» (էջ 89), որ «Յաղագս նշանացը» մեղ ներկայանում է որպես անծանոթ մի հեղինակի կողմից կազմված ժողովածու», որի մեջ «սգտագործված են զանազան հեղինակների աշխատություններ» (էջ 89), այսինքն կրկնում է 75 տարի առաջ արտահայտված Հ. Թորոսյանի անհիմն ու սխալ ենթադրությունը, համաձայն որի «Յաղագս ամպոց և նշանացը» «ուրիշ բան չէ, բայց եթե հավաքում մի այլևայլ օգային երևույթից կամ դուշակությանց, քարգմանյալ յայլևայլ գրոց»⁴:

Տեղն ու տեղը ասենք, որ իր հոգվածը եղրափակելով, Գ. Աբգարյանը միանգամայն մոռանում է «իր» վերոբերյալ ենթադրությունը, թե «Յաղագս ամպոց և նշանացը» «հունարեն մի ամբողջական աղբյուրի» թարգմանությունը չէ, որ դա «արդեն պատրաստի հայերեն զանազան թարգմանություններից քաղված նյութերի հավաքածու» է, և այս անգամ ցույց է տալիս, որ «ժողովածուի առաջին և հիմնական մասում օգտագործված թարգմանությունը, ամենայն հավանականությամբ, Եվդոքսոս Կնիդացու երկի թարգմանությունն է» (էջ 89). որ դա մեկ ամբողջական աղբյուր է (էջ 80): «Առաջին մաս» ասելով, Աբգարյանը նկատի ունի ողջ «Յաղագս ամպոց և նշանացը», բացառյալ դրա վերջում կցված կես էջ ընդմիջարկությունը. որը նրա կողմից մկրտվել է «Երկրորդ մաս»: Այդ մասին ստորև: Բայց Աբգարյանը չի բացատրում. ի՞նչ հրաշքով այդ «զանազան թարգմանություններից», «զանազան հեղինակներից» քաղված նյութերի հավաքածուն կամ ժողովածուն և՛ նյութի շարադրման հերթականությամբ, և՛ բովանդակությամբ համապատասխանեց Արատոս Սուլացու երկին: Հ. Թորոսյանն իր ժամանակ, տեղյակ չլինելով «Յաղագս ամպոց և նշանաց» երկի հունարեն բնագրին, կարող էր այն «հավաքում մի յայլևայլ գրոց» համարել, բայց Աբգարյանը, որի ձեռքի տակ կար մեր հոգվածը, այդ բանն ասելու հիմք չունեի: Բայց շարունակենք:

«Հ. Բարթիկյանը, — գրում է այնուհետև Գ. Աբգարյանը, — ծանոթ չլինելով Հ. Թորոսյանի աշխատությանը, որի մեջ արդեն ցույց է տրված, որ «Յաղագս նշանացը» կազմված է (?) Բարսեղ Կեսարացու հայերեն թարգմանությունից (V դար) հետո, սույն երկը վերագրում է այդ թարգմանությունից շուրջ 800 տարի առաջ ապրած Արատոս Սուլացուն (315—239 մ. թ. ա.)» (էջ 77):

Հասկանալի չէ, ինչի՞ դեմ է առարկում Աբգարյանը: Թորոսյանը ցույց է տվել, որ «Յաղագս ամպոց և նշանացը» ստեղծվել է V դարից հետո: Իսկ մենք տարբեր բան ասե՞լ ենք: Եվ ի՞նչ տարօրինակ բան կա, որ Սուլացու երկը հայերեն թարգմանվեր 800 կամ ավելի տարի անց: Մենք «Յաղագս ամպոց և նշանացի» հունարեն բնագիրն ենք վերագրել Արատոս Սուլացուն և ոչ նրա մեկ հաղարամյակ անց կատարված հայերեն քարգմանությունը:

⁴ Հ. Թորոսյան, Անանիա Շիրակացին և «Արարատ» թերթին մի հավելվածը, «Բաղմավեպ», 1896, էջ 220:

Այսպիսով, ըստ նոր տեսակետի «Յաղագս ամպոց և նշանացը» Արատոս Սուլացու երկի թարգմանությունը չէ։ Այդ միտքը հաստատելու համար Աբգարյանը կողր-կողքի բերում է 6 հատված «Յաղագս ամպոց և նշանաց» երկից և նրանց նմանությունները գտնում Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի մեջ։ Բոլոր 6 օրինակներն էլ բերված են «Յաղագս ամպոց և նշանաց» երկի վերջին կես էջից, որը, ինչպես արդեն ցույց է տրված մեր հոգվածում, իր համապատասխան տեղը չունի Արատոս Սուլացու բանաստեղծության մեջ։ Հետևաբար, իվուր է այդ միտքը իրեն վերադրում Աբգարյանը, զրելով, որ այդ կես էջը «ոչ մի կապ չունի Արատոս Սուլացու բանաստեղծության հետ» (էջ 79)։ Այդ մասին արդեն ժամանակին ասել ենք։ Բայց դեռ հարց է, թե այդ 6 կետի հինգիսկը Բարսեղ Կեսարացին է։

Գ. Աբգարյանը շարունակում է. «Խնդրո առարկա օգերևութաբանական ժողովածուն, ըստ իր մեջ օգտագործված աղբյուրների, բաժանվում է երկու որոշակի մասերի։ Առաջին և հիմնական մասն ընդգրկում է 61 օգերևութաբանական նշան, որոնց բովանդակությունը մասամբ համընկնում է Արատոսի 422 տողանոց բանաստեղծության 51—261 տողերի բովանդակությանը։ Երկրորդ մասը բաղկացած է 17 օգերևութաբանական նշաններից, որոնցից վեցը, ինչպես տեսանք, բաղված են Բարսեղ Կեսարացուց, իսկ մնացած 11 նշանների աղբյուրները մեզ հայտնի չեն» (էջ 79)։ Եվ մի փոքր անց, մոռանալով, որ «Յաղագս ամպոց և նշանացը» (բացառյալ վերջին կես էջ ընդմիջարկությունը՝ «Երկրորդ մասը») «մասամբ համընկնում է» Արատոս Սուլացու բանաստեղծության 51—261 տողերին (այդ ցույց ենք տվել մենք և ոչ Աբգարյանը, այն էլ՝ որ համընկնում է ամբողջությամբ, և ոչ թե մասամբ), սկսել սպիտակի վրա գրում է. «Հունարենից թարգմանված» այդ օգերևութաբանական երկի ղխավոր աղբյուրը «կապ չունի Արատոս Սուլացու հետ» (էջ 89), որ «Արատոսի բանաստեղծությունը չի կարելի դասել նույնիսկ «Յաղագս նշանացի» աղբյուրների շարքում» (էջ 88), քանզի, Աբգարյանի համոզմամբ, այդ երկու աշխատությունների միջև ընդհանրությունների «հետքն անգամ չկա» (նույն տեղում)։ Այսպիսով, մի տեղում՝ «մասամբ համընկնում է», մյուս տեղում՝ «հետքն անգամ չկա»։

Այդ կես էջ ընդմիջարկությունից բերած 6 կետի հիման վրա, որոնք ընդամենը 15 տող են կազմում և նմանություն են հանդես բերում Բարսեղ Կեսարացու մոտ, Աբգարյանը մերժում է մնացած 200 տողի Արատոսին պատկանելը, թեև սույն հոգվածի սկզբում բերված 10 օրինակները վիճելու տեղ չեն թողնում։

Գ. Աբգարյանի համար պարզ է, որ իր նշած բոլոր վեց օրինակները, բերված յինելով, այսպես կոչված, «Երկրորդ մասից», այն է՝ վերջին կես էջ ընդմիջարկությունից, չեն կարող լուծել «Առաջին մասի», այսինքն ողջ «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատության հեղինակի հարցը։ Բայց քանի որ նրա նպատակն է ժխտել այդ «Առաջին մասի» որևէ աղբյուր Արատոս Սուլացու երկի հետ, ապա նա այդ «Առաջին մասում» էլ է գտնում Արատոսի երկի և «Յաղագս նշանացի» այլ տարբերություններ ևս, որոնք մենք «չենք նկատել»։ Նա բերում է ընդամենը երեք օրինակ. նախ Արատոսի բանաստեղծության 217—221 տողերը (չգիտես ինչու հունարեն բնագիրը և ոչ գերմաներեն թարգմանությունը, որից թարգմանել է), տալիս է իր հայերեն չափածո թարգմանությունը և գտնում, որ «Յաղագս նշանացի» համապատասխան տեղին ամենևին չի նը-

մանվում, իսկ ինչպե՞ս պիտի նմանվեր, երբ Աբգարյանը Արատոսի գործը չափաժող է թարգմանում գերմաներեն թարգմանությունից, կատարելով բաղմաթիվ պլաստիկ վերահատուկություններ, որոնք ինքն է աեկեղծորեն մատնացույց անում. «Առատ» բառն ավելացրել ենք մենք: Տաղաչափական նկատառումներով (!!) կատարված այս և այլ կարգի փոփոխությունների դիմել եմ նաև նախորդ 5 և առաջիկա 17 տողերի թարգմանության ընթացքում: Հստ որում, չենք հետևել Արատոսի տաղաչափությանը» (էջ 81, ծանոթ. 17): Այս բոլորից հետո, անկասկած, իրավացի է Աբգարյանը, որ «ո՛չ մի նմանություն» (էջ 81) չի գտնում Արատոսի բնագրի և «Յաղագս ամպոց և նշանացի» միջև: Մեր միջնադարյան թարգմանչի սկզբունքները, անտարակույս, ավելի գիտական էին: Նա թարգմանել է բնագրից և ոչ թե թարգմանությունից, բնագրի բովանդակության հարադատությունը չդոհաբերելով իր թարգմանության հանգին ու ոտքին: Ինչևիցե՛ր Բայց Աբգարյանը, մերժելով Արատոսի երկի և «Յաղագս ամպոց և նշանացի» ունեցած սկնբախ աղերսը, այդպիսին գտնում է խնդրո առարկա հայերեն թարգմանության և «Գիրք վաստակոցի» միջև: Նա պարզ ի պարզ գրում է. «Մա (այսինքն «Յաղագս նշանացը» — Հ. Բ.) հիշեցնում է այնպիսի մի օգերևութաբանական արձակ (ոչ չափաժող) ձևոնարկ, որն օգտագործված է նաև «Գիրք վաստակոցում» (էջ 81): Եվ բերում է «Գիրք վաստակոցի» համապատասխան տեղը, ապացուցելու համար իր մտքի, այս անգամ իսկապես երկմարտացի լինելը. «Յորժամ տեսանես զագուսն, որ լողանան ի ջուրն, անձրեաց նշան է»: «Յաղագս ամպոց և նշանաց» երկից հատվածներ բովանդակող Մատենադարանի № 1973 ձեռագրում այդ տեղը հետևյալ տեսքն ունի. «Յորժամ ագուս ի գետս սխրձին ուսովքն հետ և կամ լուանին՝ զամպ նշանակէ» (էջ 81):

Գ. Աբգարյանը «Գիրք վաստակոցին» է անդրադառնում նաև իր հոգվածի 88-րդ էջում և բերում հինգ օրինակներ ևս, միանգամայն անշուշտ կերպով մատնացույց անելով նրանց ռեդիկալությունները «Յաղագս ամպոց և նշանացի» հետո Բայց ահա այստեղ է, որ Աբգարյանի դժվարություններ կառուցած ողջ շենքը փուլ է գալու իր իսկ առաջ քաշած կովանի հարվածների տակ:

«Գիրք վաստակոցը» թարգմանական երկ է: Թարգմանված է արաբերենից, որի բնագիրը հունարեն է և կոչվում է «Գեոպոնիկա» (Γεωπονική): Կանգ առնենք Աբգարյանի բերած առաջին մեջբերման վրա. «Յորժամ տեսանես զագուսն, որ լողանան ի ջուրն, անձրեաց նշան է»: «Գեոպոնիկայի» հունարեն բնագրում.

καὶ κοροῖνε... πατα νεγροῖνε... διαφύου προεργασε (I. 3. 7).

Ահա և «Գեոպոնիկայի» համապատասխան տեղի Ե. է. Լիպչիցի իրականացրած ռուսերեն թարգմանությունը՝ հունարենին ոչ տեղյակ մասնագետների համար. «Если ворона... пускается вплавь... то это предвещает дождь»⁵. Նույնությունն ակնբախ է:

Որպեսզի ընթերցողը առավել ևս համոզվի Գ. Աբգարյանի իրավացիու-

⁵ Геопоники. Византийская сельскохозяйственная энциклопедия X века. Введение, перевод с греческого и комментарий Е. Э. Липшица. Москва—Ленинград, 1960. кн. I, гл. 3, § 7, էջ 41.

թյանը, այս մեկ և նրա նշած մյուս հինգ տեղերից բացի բերենք մի քանի օրինակներ ևս, հաստատելու համար «Ճաղագս ամսոց և նշանացի» ու «Գեոպոնիկայի» սերտ աղերսը՝ Այսպես.

1. «Ճաղագս ամսոց և նշանացում».

«Յորժամ ամենայն բոլորն լուսնի «շիկագոյն անցեալ և հրացեալ՝ ևս առաւել քան զառաջինն լինի յուզումն ամսոց և աւոց»:

Γεωπονικά-ում.

καὶ ἐρσιρότ ὅς ὁ κήλιος αὐτῆς φαίνεται τὴ πύρροντς γεύοντα πηλαίνει.

«Գեոպոնիկայի» ուսերեն թարգմանության մեջ.

«Если ее (т. е. луны) круг кажется красным или огненным, то будет буря» (I, 3, 1).

2. «Ճաղագս ամսոց և նշանացում».

«Յորժամ ճանճք սրագոյնս խածանեն... զյուզմունս ամսոց նշանակէ»:

Γεωπονικά-ում.

καὶ μῦαί ἐπὶ πλεον ὀκχυνύσας... γεύοντα ἐσόμενον ὀτλήσας.

«Գեոպոնիկայի» ուսերեն թարգմանության մեջ.

«Если мухи кусаются сильнее... то будет буря» (I, 3, 9).

3. «Ճաղագս ամսոց և նշանացում».

«Յորժամ ի կասկարայս կամ ի պուտունս կայծակունք ժողովին՝ անձրևս նշանակեն»:

Γεωπονικά-ում.

εἰ ὅς καὶ εἰς χύτραν τὴ χαλκεῖον σπινθηρεῖ γίγνεται, ὀμβρὸς ὀτλήσας.

«Գեոպոնիկայի» ուսերեն թարգմանության մեջ.

«Если на горшке или на медном котле появляются искры, то будут дожди» (I, 3, 6).

Օրինակները կարելի է բաղադատել, բայց պարզ է, որ դրա կարիքը չկա:

Ինչ է իրենից ներկայացնում «Գիրք վաստակոցը» («Գեոպոնիկան»)։ Դա տարբեր հեղինակների աշխատությունների հիման վրա X դարում, Կոստանդին Միրանաթինի օրոք կատարված մի բանաբաղություն է, որ վերագրվում է Կասսիանոս Բասսոսին։ Կազմողը, ինչպես իսկական գիտնականին է վայել, նշում է բոլոր այն հեղինակների անունները (շուրջ 30 հոգու), որոնց աշխատություններից օգտվել է։ Նա չի մոռանում հիշել իր աղբյուրը նաև Աբգարյանի և մեր հիշած հատվածները բերելիս։ Եվ նա պրում է. 'Αρχαῖος — Արատոսից (ուսերենում՝ [ИЗ] Арата).

«Գեոպոնիկան» կազմողը Արատոսից քաղած նյութը երկու գլխում է տեղադրել։ Մեկը (Գիրք Ա, գլ. 2) վերնագրել է. «Վալ եղանակի նշաններ։ Արատոսից» Πρωγενέτης εὐόμενος. ἀέρως. 'Αρχαῖος. Ռուսերեն թարգմանությունը. «Приметы хорошей погоды. [ИЗ] Арата», իսկ մյուսը (Գիրք Ա, գլ. 3) «Վատ եղանակի նշաններ։ Ինչպիսի նշաններ անձրև են կանխագուշակում։ Նույնից» (Πρωγενέτης γεύμενος. ἀέρως. καὶ ἐκ πύλων πηλαγίων ὀμβρὸς γρή πρόσσει. Τὸ αὐτό. Ռուսերեն թարգմանության մեջ. «Приметы непогоды; по каким признакам следует ожидать дождь. Его же»)։ Ավելորդ է այստեղ բերել «Գեոպոնիկայի» վերոհիշյալ հատվածների համադատասխան տեղերը Արատոսի հունարեն բնագրից։ Հետաքրքրվողների կամ «Գեոպոնիկան» կազմողի խոսքին չհավատացողների համար նշենք, որ Աբգարյանի

81-րդ էջում նշած օրինակը համապատասխանում է Արատոսի բանաստեղծության 218—220-րդ տողերին, մեր բերած օրինակներից առաջինը՝ 64—66, երկրորդը՝ 241—243, իսկ երրորդը՝ 251—252-րդ տողերին:

Ահա այս բոլորից հետո շենք կարող հաշվի առնել Դ. Աբգարյանի այն հիմնադուրկ հայտարարությանը, թե «այս օրինակները թելադրում են մրտածել, որ Արատոսի բանաստեղծությունը չի կարելի դասել նույնիսկ «Յաղագս նշանացի» աղբյուրների շարքում, որովհետև (Արատոսի) բանաստեղծության մեջ չկա անգամ հետք այն ընդհանրությունների, որոնք գտնում ենք «Գիրք վաստակոցում» և այլ նմանօրինակ աղբյուրներում» (էջ 88):

Համոզված լինելով հանդերձ, որ «Յաղագս ամպոց և նշանացը» Արատոս Սուրբուհի Դուրբանյան կամ Սուրբուհի աշխատության թարգմանությունն է, այնուամենայնիվ, ելնելով հայերեն թարգմանության մեջ առկա 26 տողից⁶ և վերջին կես էջ ընդմիջարկությունից, որոնք չկան հունարեն բնագրում, և նկատի ունենալով այն հայտնի իրողությունը, որ Արատոս Սուրբանյան պարզապես Եվդոքսոսի օգերևութաբանական արձակ երկը շափածոյի վերածողն է, ամենայն զգուշությամբ արել էինք մի վերապահում. «Արատոսի սկզբնաղբյուրը՝ Եվդոքսոս Կնիդացու գործը, մեզ չի հասել: Մենք ի վիճակի չենք դատելու, թե Արատոսը ինչքանով է ընդգրկել Կնիդացու գործը, նա բացթողումներ կատարել է, թե ոչ, նյութը նույն հաջորդականությամբ բերել է, թե ոչ: Հարց է ծագում. մեր թարգմանությունն ուղղակի Եվդոքսոս Կնիդացու երկի թարգմանությունը չէ՞ արդյոք, այդ ավելի հատվածները ուղղակի Եվդոքսոսի երկից չէ՞ն գալիս արդյոք, հատվածներ, որ հնարավոր է Արատոսը բաց է թողել: Եթե դա իսկապես այդպես է, հասկանալի է, որ հայերեն թարգմանության արժեքը անգնահատելի է դառնում: Եվդոքսոս Կնիդացու բազմաթիվ աշխատություններից և ոչ մեկը մեզ չի հասել: Սա կլինի մեզ հասած նրա միակ գործը, այն էլ հայերեն թարգմանությամբ» (էջ 359): Այդ կարևոր հարցի լուծումը մենք թողել էինք արատոսագետներին, մեզ համարելով ոչ իրավասու. «Արատոսի գործի հմուտ մասնագետները պետք է ստեն իրենց խոսքը այդ հատվածների մասին»: Գ. Աբգարյանը, սակայն, գտնում է, որ «Արատոսի գործի հմուտ մասնագետներն այստեղ ասելիք չունեն» (էջ 84), այլ ասելիք ունի... ինքը, Դուրբանյանը: Եվ ի՞նչ է ասում. «Մատենադարանի «Բանբերի» հոդվածի վերջում,— ասում է նա, — հեղինակը (այսինքն Բարթիկյանը), ելնելով երկու բնագրերի ականհայտ հակասություններից (?!), հատնել է այն միտքը, թե հնարավոր է, որ «Յաղագս նշանացը» ոչ թե Արատոսի բանաստեղծության, այլ մեկ ուրիշ հեղինակի՝ Եվդոքսոս Կնիդացու (390—337 թթ. մ. թ. ա.) օգերևութաբանական ձեռնարկի թարգմանությունն է» (էջ 84): Եվ կրկնելով մեր ամենայն զգուշությամբ արած ենթադրությունը այս հարցի վերաբերյալ, ասում է (որոշ մտքեր ավելացնելով). «Կարծում ենք (?!) այդ մասի (նկատի ունի «Յաղագս ամպոց և նշանացը», բացառյալ վերջին կես էջ ընդմիջարկությունը— Հ. Բ.) հիմնում իսկապես ընկած է Եվդոքսոս Կնիդացու երկից մի հատված» (էջ 84): Մի փոքր հետո այդ «հիմնում իսկապես ընկածը» արդեն որոշակի կերպաբան է ստանում. «Վերջինս (այսինքն «Յաղագս ամպոց և նշանացի» Աբգարյան բաժանմամբ Առաջին մասը— Հ. Բ.) պատկանում է Եվդոքսոսի»:

⁶ Մեր հոդվածի 351-րդ էջի երկու տողը թյուրիմացաբար է շղագիր շարվել: Նրանք ունեն իրենց համապատասխան տեղերը Արատոսի մոտ (տող 256—258):

սոս Կնիկացուն և կասյ չունի Արատոս Սոլագոս հետ: Եվդոքսոսին VII դարում հայերեն է թարգմանել Անանիա Շիրակացին»:

Զգիտես Աբգարյանը ինչի՞ հիման վրա է այդպես համոզված պնդում: Եվ տեղին է ձևարիտ հասցեատիրոջը վերագրածն էլ Գ. Աբգարյանի կողմից սխալ հասցեագրված տողերը. «Ո՛չ մի բանասիրական փաստարկ չի բերված հոգուս» ևվդոքսոս Կնիկացու երկի և «Յաղագս նշանացի» նույնությամբ: Ուրեքցողը չգիտե. թե ինչ հիմունքներով է «Յաղագս նշանացի» համարվել «Եվդոքսոս Կնիկացու» բարգմանությունը: Հայերեն չի բարգմանված (ինչի՞ց թարգմաներ) և «Յաղագս նշանացի» հետ չի համեմատված» Կնիկացու «ոչ մի տող, որից երևաւ, որ այդ բնագրերն ինչ-որ կապ ունեն» (էջ 84, ծանոթ. 21):

Աբգարյանին, այսպիսով, թվում է, որ զրչի մեկ հարվածով լուծեց երկու բարդ հարց. «Յաղագս ամպոց և նշանացի» երկի հունարեն բնագրի հեղինակի հարցը և վերջինիս հայերեն թարգմանչի Թարգմանիչն, ըստ նրան, Անանիա Շիրակացին է: Որպես սեփականը ներկայացվող այս կարծիքը, ինչպես տեսանք սույն հոդվածի սկզբում, պատկանում է Գ. Տեր-Մկրտչյանին, և հայտնվել է Աբգարյանից 75 տարի առաջ: Սակայն անվանի հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը ինչ-որ հիմքեր է փնտրել այդ ենթադրությունը հաստատելու համար, բայց, ըստ երևույթին իրավիճակի Աբգարյանի համար այդ հարցը շատ ավելի դյուրին ու օրինական «լուծում» է գտնում: «Ավելի հին ժամանակներում (V—VI դդ.),— գրում է Աբգարյանը,— մենք չենք գտնում Շիրակացուց առավել հաճախ (!?) մի գիտնական, որը հունարենից թարգմանած լինելը Եվդոքսոս Կնիկացու (կամ մեկ ուրիշի) օգերևութաբանական ձևերով» (էջ 89):

Ստացվում է, որ որևէ երկի թարգմանիչը որոշելու գործում կարևորը այդ երկի համար «առավել հաճախ» թարգմանիչ փնտրել-գտնելն է, և ոչ այդ երկի բաղմանկողմանի ուսումնասիրությունը: Սի կողմ թողած առաջ քաշված «փաստարկի» ոչ լուրջ լինելը, ժամանակը չէ՞ արդյոք, որ վերջապես ձեռք-պատվենք ողջ հայ միջնադարի ճշգրիտ գիտությունների մասին խոսելիս սոսկ Անանիա Շիրակացու անունը հղումը:

Կարևոր և հիմնական հարցերը ուսումնասիրելուց հետո Գ. Աբգարյանը իր հոդվածում կանգ է առնում «Յաղագս ամպոց և նշանացի» հետ կապված մի շարք երկրորդական խնդիրների վրա ևս, այդ թվում խնդրո առարկա բնագրի «ճշգրտման» հարցի, ինչ գտնում է, որ Մատենադարանի 971 թ. գրված ձեռագրում պահպանված «Յաղագս ամպոց և նշանացի» երկը (սրանից են կատարված հրատարակությունները) լիքի է, և հարց է բարձրացնում «խնդրո առարկա բնագրի առավել ճշգրտված գիտական հրատարակության և նրա հիման վրա կատարվելիք ուսերեն (և այլալեզու) նոր թարգմանության անհրաժեշտություն» մասին (էջ 91): Հոդվածագիրը գտնում է, որ «այս գործին իր որոշակի նպաստը կրերի անշուշտ նաև № 1973 ձեռագիրը... «Յաղագս նշանացի» բոլոր հատվածներ,— վերջացնում է նա,— այս ձեռագրում պահպանվել են առավել ճիշտ ձևով» (էջ 91):

Ինչ խոսք, XIV դարի ձեռագրի հիման վրա հնարավոր է ուղղել, սրբագրել, ճշգրտել դրանից կես հազարամյակ առաջ գրված ձեռագրի տեքստը, եթե այդ ուշ ձեռագրի համար բնագիր ծառայած օրինակը ավելի ընտիր է: Բայց Աբգարյանի բերած մի քանի օրինակները այդ բանը չեն հաստատում, դրանք վկայում են, որ 971 թ. ձեռագիրը շատ ավելի ընտիր է, քան XIV դարում արտագրված № 1973 ձեռագիրը: Հոդվածագիրը նշում է մի շարք տեղեր, որոնք,

իր կարծիքով, վկայում են XIV դարի ձեռագրի առավելության մասին՝ 971 թ. ձեռագրի նկատմամբ: Օրինակի համար 971 թ. ձեռագրում գրված է. «Յորժամ մրջմունք դձուս իւրեանց հանեն ի ծակուց»։ Ըստ Աբգարյանի դա թերի է և այն պիտի «ճշգրտել» № 1973 ձեռագրի բնագրի հիման վրա, որտեղ գրված է. «Յորժամ մրջմունք դձուս իւրեանց և դձագ, կերակուրս արտաքս հանեն»⁷:

Իժովար չէ համոզվել, որ № 1973 ձեռագրից բերված այս նախադասությունը աղավաղված է և ունի ընդմիջարկություններ, այդ բանը հաստատում է ամենից առաջ խնդրո առարկա երկի հունարեն բնագիրը՝ Արատոսի տեքստը, որտեղ կարդում ենք. *καὶ καὶ τὴν ἀνθρώπου ἐκείνου ἐξ ὧν πάλιν ἠδιστα ἀνθρώπου*։ Քարգմանենք. «Երբ մրջյունները խոր ծակից շտապ դուրս են հանում բոլոր ձվերը»։ Այսինքն այնպես, ինչպես 971 թ. ձեռագրում: Այստեղ չկան ոչ «ծագերը» ոչ էլ «կերակուրը»:

Աբգարյանը բերում է մի շարք նման «ուշադրության արժանի» բառեր ու արտահայտություններ, որոնց վրա, ելնելով վերոբերյալ օրինակից, իհարկե, իմաստ չունի մանրամասն կանգ առնել: Բայց այդուհանդերձ բերենք մի օրինակ ևս 971 թ. ձեռագրում գրված է. «Յորժամ երկրի կամ կղզոյ ծայր»։ № 1973 ձեռագրում. «Յորժամ կղզոյ կամ լեռանց այրն...»։ Աբգարյանը «այրքն» ընթերցումը համարում է ճիշտ և առաջարկում 971 թ. ձեռագրի համապատասխան տեղը «ճշգրտել», անտեսելով, որ հունարեն բնագիրը համապատասխան տեղում ունի *αἵματι*, որ «ծայրք» է նշանակում, և ոչ «այրք»։ Քարգմանական երկերի ճշտության չափանիշը նախ և առաջ նրանց բնագիրն է:

Ավելորդ չէ ասել, որ «ճշգրտումը» ինքնանպատակ չէ, յուրաքանչյուր «ճշգրտում» կոչված է աղավաղված բնագիրն ուղղելու, պարզելու, իմաստավորելու այն տեղերը, որոնք գրիչների մեղքով դարձել են անհասկանալի և անիմաստ: Բ. Աբգարյանի առաջարկած «ճշգրտումները», ցավոք, ինքնանպատակ են, նրանք ոչ թե պարզ ու հասկանալի են դարձնում անհասկանալի և մութ տեղերը, այլ ընդհակառակը, պարզ տեղերը մթացնում, խավարեցնում են, անհասկանալի ու իմաստազուրկ դարձնում: Կանգ առնենք հենց այս վերջին օրինակի վրա: Բերենք «ճշգրտված» նախադասությունն ամբողջությամբ. «Յորժամ երկրի կամ կղզոյ ծայրք դիմաք ի ծովս կողմն են և քան զինքեանն»⁸։ Կերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակենք: Այսինքն. «Երբ երկրի կամ կղզու ծայրերը⁹ ծովահայաց են և իրենց վրա ամպ ունեն, դա խառնակ հողմի նշան է»։ Պարզ ու հասկանալի նախադասություն: Ինչ է ստացվում «ճշգրտվածից»։ «Յորժամ կղզոյ կամ լեռանց այրն դիմովը ի ծովակողմ են և քան զինքեանս ևս վերագոյն ամպ ունիցին՝ խառնակ հողմն նշանակէ»։ Այսինքն. «Երբ կղզու կամ լեռների բարայրները ծովահայաց են և իրենց վրա ամպ ունեն, դա խառնակ հողմի նշան է»։ Բայն ստացվեց: Լեռը կամ կղզին չե՞ն կարող և քարայրներ չունենալ, և եթե ունենան էլ, պարտադիր է, որ նրանք լեռների գագաթներին լինեն, որպեսզի ծածկված լինեն ամպերով: Քարայրները լինում են և ստորոտում, ապա դրանք ինչպե՞ս են ամպով ծածկվում, պարզ չէ: Պարզ չէ

⁷ Իր հոդվածի 88-րդ էջում, երբ Աբգարյանը խնդրո առարկա նախադասությունը համեմատում է «Երբ վաստակոցի» հետ, վկայակոչում է ոչ թե № 1973 ձեռագրի «ընտիր ընթերցվածը», այլ... 971 թ.: Պարզ է, որովհետև № 1973 ձեռագրի տեքստը չի համընկնում այստեղ «Երբ վաստակոցին»: Համընկնում է 971 թ. ձեռագրի տեքստը: Բայց այդպես էլ պիտի լիներ:

⁸ «Մայր-ծագ, եզր, կատար, վերջ տարածութեան»: Տե՛ս նոր բառգիրք հայկազեան լեզուի հատ. Ա, էջ 1005:

⁹ Հանդես № 4

նաև, թե այդ քարայրները, լինեն դրանք սարի գաղաթին կամ ստորոտին, ինչպե՞ս են տեսանելի, եթե նկատի ունենանք, որ դրանք ծովահայաց են և իրենց վրա ամա ունեն⁹։

Գ. Աբգարյանի մատնանշած մնացած բոլոր «ուշագրության արժանի» բառերն ու արտահայտությունները նման բնույթի են, որով անկասկած է դառնում, որ N 1973 ձեռագրի հիման վրա «Յաղագս ամսոց և նշանացի» առավել ճշգրտված» հրատարակություն իրականացնել չի կարելի։

Բայց եթե N 1973 ձեռագիրը սրևէ արժեք չի ներկայացնում՝ 971 թ. ձեռագրի տեքստը «ճշգրտելու» համար, ապա նա մեծ արժեք է ներկայացնում այլ իմաստով։ Այն նախ և առաջ մի անգամ ևս հաստատում է «Յաղագս ամսոց և նշանացի»... Արատոս Սուրբուհի Երկի թարգմանությունը լինելու մեր եղբակացությունը և, որ պակաս կարևոր չէ, վկայում է, որ հնում հայ թարգմանիչը թարգմանել է Արատոսի 422 տողից բաղկացած բանաստեղծությունն ամբողջությամբ, և ոչ թե մինչև 261-րդ տողը, ինչպես երևում է 971 թ. ձեռագրից, քանզի Գ. Աբգարյանի՝ N 1973 ձեռագրից բերած 14 օղերևութաբանական նշանները Արատոսի բանաստեղծության հաջերեն թարգմանության 971 թ. ձեռագրում չպահպանված մասից են։ Երևեսր N 1973 ձեռագրից երևե օրինակ՝ սկզբից, մեջտեղից և վերջից։

1. «Յորժամ քրազի հուրն հանդարտ ելանէ և յորժամ բուէճք հանդարտ ձայնեն՝ զսպառումն ձմերան նշանակէ»։

Արատոսի մոտ.

Կա՛ լուսնս Կայսրի և յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի
Կայսրն աստուծոյ յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի
Կայսրն աստուծոյ յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի (267—269)։

Թարգմանությունը.

«Երբ քրազի բոցը մեղմ բարձրանա,
և գիշերային բուն մեղմ ձայնի, դա ձմռան
ավարտի նշան է»։

2. «Յորժամ արջառ և այլ անասունք զերկիր փորեն՝ զդէմս ի հարաւ արարեալ՝ ձմեռն նշանակէ»։

Արատոսի մոտ.

Է՛ զի թո՛ւս և յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի
Կայսրն աստուծոյ յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի
Կայսրն աստուծոյ յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի
Կայսրն աստուծոյ յաղագսի և յաղագսի և յաղագսի և յաղագսի (350—353)։

9 Գ. Աբգարյանի՝ N 1973 ձեռագրից բերած 14 օղերևութաբանական նշաններից առաջինը հետևյալն է. «Յորժամ ի ծայրս լեռանց միայն նստիցի ամալ և այլ ամենայն օգրն անամալ են՝ յորմէ կողմանէ թերի երկի թէ դոյ ամալ՝ անդի կողմանէ լինելոց է հողմ» (էջ 91)։ Այս նախադասությունը Գ. Աբգարյանին միջին չի հուշել, որ նախորդ օրինակի «այրբն» ընթերցումը սխալ է, իսկ եթե նա զանում է, որ ոչ, ապա ինչո՞ւ այս «ծայրս»-ը չի ուղղել «այրս»։

Թարգմանությունը.

«Երբ արչառը և մանր եղջերավոր անասունները
ծանր բեռնավորված աշունից հետո երկիրը փորեն, գլուխները
հյուսիսային քամու դեմ ուղղած, նշանակում է,
որ Պլեյադներն են իջնում խիստ ձմեռ կրելով»:

3. «Յորժամ շունը ղերկիր փորեն՝ դձսեռն նշանակէ»:

Արատոսի մոտ.

... καὶ γὰρ τὸ καὶν ὠρνέτω πύσσιν
ἀνέστέρουσ, γελῆσιν ὁ πέρχουσιν ὄρεσιν (403—404).

Թարգմանությունը.

«Շունը երկու ոտքով [գետինն է] փորում, երբ զգում է,
որ ձմեռն է պլիս»:

Նույնությունն ակնբախ է:

Քննության ենթարկած բազմաթիվ և բազմապիսի հարցերի շարքին, Գ. Աբգարյանը նպատակահարմար է գտել անդրադառնալու Արատոսի հունարեն բնագրի և «Յաղագս ամպոց և նշանացի» մեր իրականացրած հրատարակության բերած «օգուտի» կամ «վնասի» մասին անգամ: Նա գրում է. «Յաղագս նշանացի» նույնությունը ցույց տալու համար «կարիք չկար ամբողջությամբ վերահրատարակելու երկու առանձին բնագրեր...: Արատոսի գործը,— շարունակում է նա,— գրեթե 40 անգամ հրատարակվել է: Մատենադարանի «Բանբերում» 41-րդ անգամ հրատարակված այդ ընդարձակ հունարեն տեքստը որևէ օգուտ չի բերում» (էջ 84, ծանոթ. 21):

Զարմանալի է, ինչու՞ 40-րդ հրատարակությունը «օգուտ է բերել», հրատարակիչները 39-րդ հրատարակությունն իրականացնելուց հետո անհրաժեշտ են գտել այն 40-րդ անգամ հրատարակել, իսկ 41-րդ հրատարակությունն արդեն «օգուտ չի բերում»: Եվ եթե Աբգարյանը համոզված է, որ ապագայում չեն լինի այդ երկի 42-րդ, 43-րդ և այդպես շարունակ հրատարակություններ, ապա նա շարաշար սխալվում է: Բայց չէ՞ որ մեր նպատակը ընթերցողին Արատոսի և «Յաղագս ամպոց և նշանացի» բնագրերը տալը չէր, այլ այդ բնագրերի նույնությունն ապացուցելը, և եթե Աբգարյանը չի համոզվել դրանում, մենք մեղք չունենք ամենևին:

Գ. Աբգարյանը իր հոդվածի վերջին երկու էջը նվիրել է «Յաղագս ամպոց և նշանաց» երկում հանդիպող առանձին անհասկանալի և աղավաղված բառերի ձշգրտմանը, վերականգնմանը և իմաստավորմանը, որքան էլ զարմանալի է, Արատոս Սուլացու բանաստեղծության հունարեն ընագրի հիման վրա: Մի առիթով հոդված գրել ապացուցելու համար Բարթիկյանի՝ «Յաղագս ամպոց և նշանաց» Արատոսի բանաստեղծության թարգմանությունը լինելու տեսակետի «անհիմն», «սխալ», «մեծ թյուրիմացություն» լինելը, ապացուցելու, որ այդ երկու բնագրերը բացարձակապես կապ չունեն միմյանց, գրել, որ Արատոսի բանաստեղծությունը չի կարելի դասել նույնիսկ «Յաղագս նշանացի» աղբյուրների շարքում» և այդ բոլորից հետո «Յաղագս ամպոց և նշանացը»

ճշգրտել Արատոսի բանաստեղծությունները, պարզապես անհասկանալի է: Անուղղակիորեն իրեն վերագրելով մեր հողվածում գրվածը, թե «Յաղագս ամպոց և նշանացում» հանդիպող աղավաղված եկեղծիք, կսփիւկոս բառերը Արատոսի չէ՞ք: Եթե ունի, Արգարյանը փորձ է անում այդ բառերը «գործողությունների» (իր խոսքն է) ենթարկելով, որոշել հայերեն թարգմանության սկզբնական բնագրում եղած բառի գրության ձիշտ ձևը: Այդ «գործողությունների» միջոցով, որոնք չգիտես ինչու «բառաքնություն» են որակված, ստանում է «կեփիկը» ձևը, որը, ինչպես ինքը, Արգարյանն է ցույց տալիս, արդեն կա Մատենադարանի N 1973 ձեռագրում և «Թաղմավեպում» հրատարակված հաս.վածում: Ի դեպ, անդրադառնալով «Թաղմավեպի» հողվածին, նա բերում է հրատարակչի սխալ ենթադրությունը, համաձայն որի «կեփիկս»-ը իբր նույնանում է հունարեն *κῆρυξ* կամ *κῆρυξ* բառերի հետ (նշանակում է իշամեղու): Արգարյանը կարծում է, որ *κῆρυξ*-ը մեկ բառ է և, երևի, ելնելով դրա մեջտեղում եղած գծիկից, ենթադրում, որ ինչ-որ աղավաղում կա այստեղ: Այնինչ բառը *κῆρυξ* է, վերջին *κῆρυξ*-ը՝ նույն *κῆρυξ*-ի սեռական հոլովը *κῆρυξ*: Բառարաններում, երբ խոսքը էրրորդ հոլովման գոյականի մասին է, անպայման տրվում է և դրա սեռականը¹⁰: Սա ի միջի այլոց, և որպես ապացույց այն բանի, որ Արգարյանի հողվածի 80-րդ էջի 13-րդ ծանոթագրության առաջին կեսում և 82-րդ էջի 18-րդ ծանոթագրության մեջ ասվածները չպետք է ընդունել:

Այնուհետև Արգարյանը «վերականգնում է» «Յաղագս ամպոց և նշանացի» համապատասխան տեղը. «Յործամ ի պարզոյ կեփիկք ի մայրեաց թռչին...» և հրամցնում իր աշխարհաբար թարգմանությունը. «Երբ կելիկները պարզ եղանակին...» և այլն: Արի գուշակիր, թե ինչ է նշանակում պարզ եղանակին թռչող կեփիկ: Մեր հողվածում գրել ենք, որ *κῆρυξ* հունարեն նշանակում է մրկահավ, և եթե աշխարհաբար պիտի թարգմանվի, ապա պիտի հայերեն բառը բերվի և ոչ հունարենը՝ հայերեն տառերով գրված:

Վերջապես Գ. Արգարյանը հարկ է համարում անդրադառնալու նաև «Յաղագս ամպոց և նշանացի» ուսերեն թարգմանությանը: Թարգմանությունն իրականացնողներն են Փ. Տեր-Դավթյանը և Ս. Ս. Արևշատյանը, որոնք հայտնի են գիտական հասարակայնությանը իրենց բարձրորակ թարգմանություններով: Հենց սկզբից պետք է ընդգծել, որ «Յաղագս ամպոց և նշանաց» երկի թարգմանությունը ևս նրանք իրականացրել են ամենայն բարեխղճությամբ և գիտական բարձր մակարդակով: Այդ բանը լուրջապես ընդունում է և Արգարյանը, բանի որ թարգմանական և ոչ մի ոխալ նա մասնացույց չի անում: Նա պարզապես նշում է թարգմանության մեջ տեղ գտած մի բանի բառերի բացթողումներ և հիմնականում կանչ է առնում «Յաղագս ամպոց և նշանացում» առկա հունարեն աղավաղված երկու բառի (պապիր, պատիլոն), հայոց բաղադարյան ողջ գրականության մեջ այս բնագրում միայն մեկ անգամ հանդիպող մի բառի (աղաղանչ), նույն բնագրում անձանաչիլի դարձած մի բառի (որոշտուեղ)

¹⁰ «3-е склонение существенно отличается от 1-го и 2-го склонений. Для того, чтобы склонять слово, относящееся к 3-му склонению, недостаточно знать *nom. sing.* как в первых двух склонениях; необходимо знать и также его *gen. sing.*, который и дается в словаре». Н. Х. Дворецкий. Древнегреческо-русский словарь. т. II. 1824.

կապակցությամբ թարգմանիչների հանդիպած զմլարությունների և տված ոչ բավարար թարգմանության վրա: Հիշածս բառերը թարգմանիչները տառադարձել են հետևյալ կերպ. *папюс, пэтилон, алапачи, ороштуэды*, այսինքն ոչ թե թարգմանել են, այլ տառադարձել: Բայց նրանք այլ բան կարող էին անել, երբ դեռևս հայտնի չէր իրենց թարգմանածի հունարեն բնագիրը: Մեր հոգվածի լույս տեսնելուց հետո, երբ աբղեն հայտնի է, թե այդ բառերի դիմաց հունարենն (ինչ արած, էլի Արատուսը) ինչ ունի, շատ հեշտ է, հենվելով Բարթիկյանի հոգվածում արղեն ուղղվածների վրա, հանդես գալ և ասել, թե *пэтилон* վրիպակը պետք է սրբադրել ուսերեն *паргелий* բառով (էջ 86), որ «աղաղանչը» հայերեն «աղողալի» բառից կազմված մի թռչնանուն է, որը, Արգարյանի ասելով, «պետք է սրբադրել *ололюгон* (*ололугон*) տառադարձությամբ» (նույն տեղում): Բայց ինչո՞ւ *ололюгон*, չէ՞ որ *ололюгон*-ը ուսերեն բառ չէ, իսկ խոսքը ուսերեն թարգմանության մասին է: Ալապաչի-ի դեմ առարկողը չպետք է նման «թարգմանություն» առաջարկել:

ЕЩЕ РАЗ О ТРАКТАТЕ «ОБ ОБЛАКАХ И ЗНАМЕНИЯХ»,
ПРИПИСЫВАЕМОМ АНАНИИ ШИРАКАЦИ

Р. М. БАРТИКЯН

(Р е з ю м е)

В VII томе «Вестника Матенадарана» (1964 г.) была опубликована наша статья, в которой доказывалось, что изданный в 1896 г. Г. Тер-Мкртчянсом в журнале «Арагат» трактат «Об облаках и знамениях» является прозаическим переводом труда древнегреческого поэта Арата из Сол, переложившего в стихах не дошедшее до нас метеорологическое сочинение Евдокса Книдского. В статье параллельно были даны поэма Арата и ее древнеармянский перевод. Исходя из ряда мест трактата «Об облаках и знамениях», не имеющих своего оригинала в поэме Арата, мы высказали предположение, что не исключено, что имеем дело с переводом непосредственно метеорологического сочинения Евдокса Книдского. Окончательное решение этого вопроса мы оставили специалистам-аратоведам.

В I-м номере «Историко-филологического журнала» от 1971 г. опубликована статья Г. Абгаряна, в которой автор хотя и признает, что содержание данного трактата «частично совпадает» с содержанием поэмы Арата, тем не менее старается показать «несходство» армянского текста с греческим оригиналом. В подтверждение своего мнения Г. Абгарян отмечает сходство трактата «Об облаках и знамениях» с рядом мест из древнеармянского перевода «Геопоники», не ведая, что в греческом оригинале «Геопоники» сказано, что их автором (кн. I, гл. 2 и 3) является Арат (в древнеармянском переводе «Геопоники» нет ссылки на имя Арата).

Г. Абгарян считает, что первоисточником трактата «Об облаках и знамениях» является метеорологический труд Евдокса Книдского.

Это предположение, первоначально высказанное нами как простая гипотеза и приведенное Абгаряном в качестве доказанного факта, ничем не обосновывается.

Предположение Г. Абгаряна о том, что переводчиком трактата «Об облаках и знамениях» является Анания Ширакаци, высказано за 75 лет до него Г. Тер-Мкртчяном. Единственный «аргумент» Г. Абгаряна то, что «в более ранней эпохе (V—VI вв.) мы не находим более подходящего (!), чем Ширакаци, человека, который перевел бы метеорологический труд Евдокса Книдского».

Содержащая часть трактата «Об облаках и знамениях» рукопись Матенадарана № 1973 (XIV в.), по мнению Г. Абгаряна, может уточнить текст, опубликованный по рукописи Матенадарана № 2679 (971 г.). Это мнение не подтверждается фактами: рукопись № 1973 показывает, что состоящее из 422 строк сочинение Арата в древности было переведено на армянский язык полностью, а не только до 261-й строки, как видно из опубликованного по рукописи № 2679 текста. Именно в этом ценность рукописи № 1973.